



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՆԻԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԵՐԵՄԵՐՈՐԴ ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԶՄԻՌՆԻԱ ՇԱՐԱԹ 11 ՅՈՒՆԻՍ 1877

ԹԻՒ 1068

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Հասարակութեան մէջ հետզհետէ պտտած պատերազմական զանազան լուրերն ըստ մեծի մասին անհիմն կամ կարծիքական են : Ստոյգն այն է՝ որ օսմանեան կայսերական զօրքն ամենայն քաջութեամբ դէմ կը դնեն թշնամոյն յարձակմանը թէ Ասիոյ մէջ և թէ Դանուբի վերայ : զոր Ռուսք՝ թէ և մի քանի անգամ փորձ փորձեցին անցանել, բայց չյաջողեցան և պարտաւորեցան ետ քաշուիլ մեծ կորուստներով :

Ի մասին զինուորական պատրաստութեանց Հէլլատայի՝ ոչ սակաւ անհիմն լուրեր հրատարակեցան, յորոց զլիաւորն է թէ Բարձրագոյն Գուռն բացատրութիւն ինդրած լինի Հէլլատական կառավարութեան վասն յիշեալ պատրաստութեանց : Լոնտոնի թԱՅՄՁ օրագիրն կրէ թէ Բոլորովին անհիմն է այս համբաւը, և կը յաւելու թէ քեզ կականակն՝ Աթէնքի օսմանեան գեղապանն հրաման քնկարել է յայտնել թագաւորին զնորհակալութիւնն օգոստոսիա Սուլթանին վասն հելլենական նորակազմ խորհրդոյն նախարարաց : Կ. Պօլսոյ լրագիրք հրաման քնկարել է Բարձրագոյն Դրանէ չափաւորել զկիսով իւրեանց ի մասին Հէլլատայի Ս. ընկնացք լիովին կը հաստատէ զխօսքը յիշեալ լրագրոյն : այսու ամենայն կը հաւատան թէ Ապաի փաշան իւր հրամանաց ներքեւ եղեալ զորադնով, Մանասթրէն ելլելով գէտ ի հելլենական սահմանադրութիւններն կը յառաջանայ վասն զգուշութեան :

Կորդչաքոֆ իշխանն ի վերջին տուրս յայտագիր մի յուղարկեաց Անգղիոյ կառավարութեան, զոր թԱՅՄՁ օրագիրն կը հրատարակէ : Այս յայտագրով կատարեալ ապահովութիւն կը տրուի, թէ Ռուսիան ամենին միաք չունի գաղիլ Շուէզի Զրանցից՝ թէ և եգիպտոսն տեսա :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ահա տարիկ ազգային պաշտօնական ազգայնորդութեան՝ որք հրատարակեցան ի կալիսիա, վասն հանելոյ ի պաշտօնէ եկեղեցականութեան զպարոն թովմաս Մելքումեան և զպարոնայս վերակապուս (կուսիսար) եկեղեցւոյն : Յիշեալ ազգարար գրութեան՝ որպէս տեսանի, հաստատան զսխալ պարունակութիւնն նամակին կալիսիայոյ՝ հրատարակելոյ ի Բանասիրականի Կալիսիայ թուոյն ԱՐՇԱՆՈՒՍՈՅ :

Յարգոյ պարոնայք Յ. Մ. Վարդան, Յ. Գ. Սարգսյան և Յ. Կարապետեան :

Աւանդապահ կալիսիայ և Ձիւրոյ սուրբ եկեղեցւոյ Հայոց :

Յարգելի պարոնայք,

Որովհետեւ ժամանակ եկեղեցականութեան զպարոն թովմաս Մելքումեան և կուսիսարութեան պարոնայք Մ. Ս. Մալխասի, Ա. Գալստանի, թ. Աւետումի և Մ. Ս. Բիշանի ի ձեռք ժամանակէ հետէ լրացեալ է, մանաւանդ և ոմանք ի կուսիսարի պարոնայք արդէն հրաժարեալ են ի պաշտօնէ իւրեանց առանց ընտրութեան փոխարորդի, և մինչ ցարդ նոր եկեղեցական ոք չարգելաւ, վասնորոյ խնդրեմք ի յարգութեան ձեռքէ՝ զի շնորհ արասիք գումարել զգործը հասարակութեան պատուելի մերազնեից, ի աղատել զպարոն թովմաս Մելքումեանն եկեղեցականութենէ, և զվերոյիշեալ կուսիսարի պարոնայք ի պաշտօնէ կուսիսարութեան իւրեանց, և կարգել զայլ եկեղեցական մի այնու պարոնայքութեամբ՝ զի յիշեալ եկեղեցականն

կանադէս (թէ օրիքման) թշնամական գործոց կարելի չըլանին մէջ կը գտնուի : Այս բանք՝ կըսէ Կորդչաքոֆ իշխանն, որքէք զարին յատակադին մէջ անցած է : Դարգաներին անցքը պարտի կարգադրելով զային համաձայնութեամբ Ռուսիան չուզեր գրաւել զի. Պօլս և ոչ պիտի թողու որ այլ որեւէ տէրութիւն գրաւէ զայն : Կորդչաքոֆ իշխանն վերջապէս կը կրկնէ իւր յայտագրոյն մէջ թէ Ռուսիան կամի միայն բարեւոքել զկապուցութիւնն քրիստոնէից՝ երաշխաւորութիւններ ի ձեռք բերելով և երբ իւր գործն կատարած լինի, պիտի վերագաւնայ ի կարգադրեալ որոշման Պօլսոյ խորհրդակցութեան :

Լոնտոնի գերձակաց գաւառն (Էսնաֆ) հացկերութիւն մէջ ուր ներկայ գտնուեցան Տէրպի լորտն և այն պաշտօնական երեւելի անձինք, արտաքին գործոց նախարարն Կոնստանտինովի մի ըրաւ, որով կամեցաւ ապացոյցանել զհարկաւորութիւնն անհետաւ արհեստի զխաղաղութիւնն եւրոպոյի : Պարտիք, ասաց, պատրաստ լինել ի պաշտպանութիւն շահուց մերոց, երբ մնասոց ենթակայ կըլինին : Բայց պարտիք միանգամայն զմտաւ անկէ թէ Անգղիոյ գլխաւոր մէկ շահն խաղաղութիւնն է :

Աւստրոհունգարիոյ գեղապանն որ ի Կ. Պօլսոյ յաջողեցաւ համոզել զԲարձրագոյն Գուռն, որպէս թիւյլ տայ նոյն տէրութեան առեւտրական շուկանաւոց զնաւարկութիւնն Դանուբի : Օսմանեան կառավարութիւնն յարգելով զբարեկամութիւնն Աւստրոհունգարիոյ տէրութեան յօժառամիտ սիրով ընդունեցաւ զնաւոր նորա մի քանի հարկաւոր պայմանօք :

Լրագիրք ոմանք կը հրատարակեն թէ իգիպուածի ինչ ինչ ծանր պարագայից, Աւստրիան առժամանակեայ կերպիւ պիտի գրաւէ մի քանի օսմանեան գաւառներ ի փոխադարձ օգուտ Բարձրագոյն Դրան և Աւստրոհունգարիոյ : Կը-

լուսեալն նաեւ թէ Օսմանեան և Աւստրիական կառավարութեանց մէջ արդէն համաձայնութիւն մի հաստատուելէ որպէսզի այս վերջին տէրութեան զօրքն մանեն ի Սերպիա, ի Պոնիա և ի Հէրսէք, ու գրաւեն զայնոսիկ մինչեւ ցլերջ պատերազմին : Օսմանեան զօրքն՝ ըստ յիշեալ լրագրոց պիտի քաշուին Պոնիայէն և Հէրսէքէն և այս գաւառքն պիտի կառավարուին առժամանակ ինչ Աւստրիոյ տէրութեան ձեռքօք :

Թէ և չեմք զիտեր թէ ինչ ատիճան ստուգութիւն կրնայ ունենալ այս զրոյցը, այսու ամենայնիւ կապացուցանէ թէ Բ. Դրան և Աւստրոհունգարիոյ մէջ բարեկամական յարաբերութիւնքն ինչ փոխադարձ փոփոխութեամբ :

Յանցելումն Բարձրագոյն Գուռն հրաման յուղարկած էր Հոգարթ փաշային՝ որ իւր հրամանատարութեան ներքեւ եղեալ նաւատորմի զորդէս ի Օտեսա երթայ և ռմբակոծէ զնոյն քաղաքն : Բայց ըստ բարեմիտ խորհրդոց բարեկամ տէրութեանց ոմանց, կայսերական կառավարութիւնն որոշեց յետո կռիւ զյիշեալ հրամանն : Ուստի Հոգարթ փաշան անցեալ շարժու. Սե Մովսէս վերադարձաւ ի Կ. Պօլս թէ իմօ շոգեհաւով, իւր հետք բերելով երեք առաւապատուր հելլենական նաւեր : Այս նաւերն որք ցորեն բեռնաւորեալ են, փորձ փորձելով բռնաբարել զպաշարութեան Ռուսական ծովազերեայ քաղաքաց, բռնուեցան օսմանեան պատերազմական նաւերէն, որ Սե Մովսէս կը պաշտպան վասն հաստատուն պահելոյ զյիշեալ պաշարութեան :

Պուքրէշէն ամսոյ 5-17էն յուղարկեալ հեռագիր մի կը ծանուցանէ թէ անընդհատ սաստիկ անձրեւն արգելք եղան զինուորական գործողութեանց, և որեւէ յարձակումն անկարելի է նախ քան զերկուս շարժիս : Միւսոյն հեռագիրն իմաց կուտայ թէ Սերպիոյ Միլան իշխանն հասեալ է ի յիշեալ մայրաքաղաքն :

սոյ՝ յերեկոյեան երեքուկէս ժաման, Նախ՝ առ ի աղատել զպարոն թովմաս Մելքումեանն ի պաշտօնէ եկեղեցականութեան իւրոյ, և զպարոնայս Մ. Ս. Մալխասի, Ա. Գալստան, թ. թ. Աւետումի և Մ. Ս. Բիշանի ի պաշտօնէ կուսիսարութեան իւրեանց, որոց ժամանակէ հետէ լրացեալ է, և մանաւանդ ոմանք ի կուսիսարի պարոնայք արդէն հրաժարեալ են ի պաշտօնէ իւրեանց առանց ընտրութեան փոխարորդի : Երկրորդ՝ առ ի կարգել նոր եկեղեցական մի այնու բարեկարգութեամբ՝ զի յիշեալ եկեղեցականն վարեաց զգործ եկեղեցականութեան իւրոյ խորհրդով և հաւանութեամբ Աւանդապահաց, և չորիցս յենկաց տարւոյն, այն է՝ յաւուրս իւրաքանչիւր երեք ամաց տացէ Աւանդապահաց զհաշիւ ամենայն ելեմտից և գործոց եկեղեցւոյն : Եւ նաեւ՝ առնել զայնպիսի փոխարկութիւն և բարեկարգութիւնն՝ որք հարկաւոր լինին վասն բարեւոք կառավարութեան ստացուածոց եկեղեցւոյն : Մնամք

Ի կալիսիա, Պատուելի մերազնեից
14 փետրվար Խոնարհ ծառայք,
1877 Յ. Մ. Վարդանեան
Յ. Գ. Կարապետեան
Յ. Կարապետեան

Աւանդապահ կալի. և Ձիւր. սուրբ եկեղեցւոյ Հայոց :

ՄԱՆՈՒՅՈՒՄՆ
Լիցի՝ պատուելի հասարակութեան մերազնեից ի կալիսիա, զի ըստ պահանջման և խնդրանաց պատուելի մերազնեից, գումարեցին ընդհանրական ժողով հասարակութեան Հայոց ի սրահն Նաղարկայ սուրբ եկեղեցւոյ յաւուր առաջիկայ շարժիս՝ ի 17-երորդում այս ամս :

—Օգոստոսական ժամանակահատվածում մարդասիրարար առ ինքն կոչել զկ. Պօլոյ սրբազան Պատրիարքն Յուզեան, հրաման տուաւ նմա նստել իւր քոյն և իւր սովորական բարեգթութեամբ հարցուց Նորին Սրբազանութեան թէ արդեօք Պատրիարքարանին առ Բարձրագոյն Դուռն մտնողեցաւ խնդիրքն կանոնադրապէս և շուտով 'ի գործ կըդրուին : Ի՞նչու մէնիքոս Պատրիարքն փութացաւ իւր խորին շնորհակալութիւնն յայտնել ծանուցանելով թէ Կ. Պօլոյ վերաբերեալ իւր ազգային խնդիրքն փութով 'ի գործ կըդրուին, բայց գաւառաց վերաբերեալ գործքն դժբաղդաբար երկարաձգութեան ենթակայ կըլինին միշտ : Եայնժամ Նորին Վեհափառութիւնն խոստացաւ հարկաւոր եղած հրամաններն յուղարկել բոլոր կուսակալաց՝ որպէսզի հոգ տանին իրենց պարտքը անյապաղ կատարել : Ետ այնորիկ մեծազօր կայսրն բարեհաճեցաւ իւր ձեռքն յանձնել Նորին Սրբազանութեան Օսմանիէ կարգին առաջին աստիճանի շքանշանն յայտնելով նմա թէ յայնժամեւ կայսերական պալատին գրուենք բաց պիտի լինի միշտ վասն հոգեւոր ազգապետին Յուզեան, և կրնայ գալ տեսնել զինքն ձանձն անգամ՝ որ ծանուցանելոյ հարկաւոր բան մի կունենայ : Նորին կայսերական Վեհափառութիւնն՝ նախքան զվեկինին իւրումէնիքոս Պատրիարքին, պարգևեաց նմա մարդասիրարար հազար օսմանեան լիւա առ 'ի վերականգնել զտուն իւր, որ յոնցեղումն հրոյ ճարակ եղև 'ի Ֆէնէր կոչեցեալ թաղն :

Զինի երկուց աւուրց՝ Յուզեան սրբազան Պատրիարքն փութացաւ այցելութեան երթալ Մեծ Եպարքոսին և արտաքին գործոց նախարարին, որոց իւր և բոլոր յոյն ազգին խորին երախտագիտութիւնն յայտնեց վասն կայսերական բարեգթութ ընդունելութեանն, որով պատուեցաւ 'ի Նորին Վեհափառութեան :

«Բարձրագոյն Դուռն հետեւեալ աղօթքը հաղորդեց լրագրաց, զոր Յուզեան Պատրիարքարանը շարագրելով՝ Յուզեան եկեղեցիները զրկած է, որպէսզի ամեն կիրակի և տօն օրերը կարդացուի, և ժողովուրդն ալ ափն ըսէ :

ԱՂՈԹՔ

«Վասն ամենազօր, ամենազօր և ամենափառ Վեհափառ իսկապետ Քրիստոսի Սուրբ Ապոստոլ Վարդապետին :
«Տէր Աստուած մեր, թագաւոր թագաւորաց և տէր զօրութեանց, որ քոյ անպատում նա-

պատուելի հասարակութեանդ մեր՝ շրջաբերականաւ յայտնեալ էաք դուամբել ժողով հասակարութեան հայոց 'ի 17երորդումն ամսոյ, այլ հրամանաւ պարոն թովմաս Մելքումեկեղեցականին արտաքին գրուենք եկեղեցւոյն փակեալ էին և ժողովն արդելաւ, վասնորոյ պարտաւորեալ՝ դուամբելոց եմք զնոյն ընդհանրական ժողով հասարակութեան հայոց 'ի 27 ամսոյս յաւուր առաջիկայ երեքշաբթիով՝ յերկու տասաներորդ ժամու միջօրէին, 'ի թիւ 16 Պօրտուգիս Զլրջ փողոցի տան, (որոյ բնակիչք շնորհ արարեալ յանձնեալ են Աւանդապահաց վասն սոյն պատճառի), նախ՝ առ 'ի ազատել զպարոն թովմաս Մելքումեանն 'ի պաշտօնէ եկեղեցականութեան իւրոյ, և զպարոնայս Մ. Ս. Մալխաս, Ա. Գալստան, Խ. Թ. Աւետում և Ծ. Ս. Բիշման 'ի պաշտօնէ կուսիսարութեան իւրեանց, որոց ժամանակ պաշտօնատարութեան 'ի ձիգ ժամանակէ հետէ լրացեալ է, և մանաւանդ ումանք 'ի կուսիսարի պարոնայց արդէն հրաժարեալ են 'ի պաշտօնէ, իւրեանց առանց ընտրութեան փոխանորդի : Երկրորդ՝ առ 'ի կարգել նոր եկեղեցական մի՝ այնու բարեկարգութեամբ զի յիշեալ եկեղեցական վարեցէ զգործ եկեղեցականութեան իւրոյ խորհրդով և հաւանութեամբ Աւանդապահաց, 'ի չորիցս յընթաց տարւոյն՝ այն է յաւուրս իւրաքանչիւր երեք ամսոց տացէ Աւանդապահաց զհաշիւ ամենայն երկամիս և գործոց եկեղեցւոյն : Եւ նաեւ՝ առնել զայնպիսի փոխարկութիւնս և բարեկարգութիւնս՝ որք հարկաւոր լիցին վասն բարեօք կառավարութեան ստացուածոց եկեղեցւոյն :

խախտմամբ եամբ, գերագոյն բարութեամբ և անհասանելի կամօք վասն փրկութեան մարդկան՝ իշխանութիւնս և զօրութիւնս հաստատեցեր յերկրի, զճառայս քո առ 'ի գործել զբարիս, և առաքեցեր զթագաւորս և զիշխանս առ 'ի պատուհասել զարս և վարձատրել զրաբիս : Վասն այսորիկ միածին որդի քո Տէրն մեր Յիսուս Գրիստոս, որ մարդացաւ վասն փրկութեան աշխարհի և վասն ուսուցանելոյ մարդկան զսէր Աստուծոյ և զընկերին, պատուիրեաց մեզ ընդ հնազանդութեան թագաւորին երկնից՝ և զհնազանդութիւն թագաւորաց երկրի՝ յասելն, Տէրք զկայսերն կայսեր և զԱստուածոյն Աստուծոյ : և 'ի բերանոյ Առաքելոց իւրոց սրբոց պատուիրեաց մեզ հնազանդիլ իշխանութեանց հաստատելոց, և աղօթս առնել վասն թագաւորաց և ամենայն իշխանութեանց : Հնազանդեալք ուրեմն Աստուածային բանից, աղօթս առնեմք 'ի ժամուս յայսմիկ վասն վեհափառ կայսեր մերոյ և Տեառն Սուրբ Սպարիւր Համիտ Խանի : Ենորհեա՛ նմա զկատարեալ առողջութիւն և կեանս երկար : Զօրացո՛ զթագաւորութիւն նորա և տո՛ւր յաղթութիւն զօրաց նորա 'ի վերայ թշնամեաց իւրոց : Խօսեա՛յ 'ի սրտի բարութեան նորա վասն ամենայն ժողովրդոց յանձնելոց 'ի հայրական խնամս նորա, լուսաւորեա՛ և զմիտ ժողովրդոց նորա, որպէսզի կեցցեն խաղաղութեամբ և եղբայրական սիրով ընդ միմեանս, մնալով հաւատարիմ և անձնանուէրք թագաւորութեանս հաստատելոյ 'ի վերայ իւրեանց կամօքն Աստուծոյ :

«Աղօթս առնեմք քեզ և վասն խաղաղութեան ամենայն աշխարհի, զի դու ես տէր խաղաղութեան և բաշխող ամենայն բարութեանց :

«Փառք քեզ, Հայր որդի և սուրբ հոգի այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, Ամէն» :

ՄԱՍԻՍ

—Մեծին—Բրիտանիոյ դեսպան 'ի Կ. Պօլիս միտոր Լէյէնտ անցեալ ամսոյ 27ին հացկերոյթ մի տուաւ 'ի պատիւ օսմանեան երեսփոխանական ժողովոյն նախագահ Աճմտ Վէֆիք փաշային և քսանի չափ երեսփոխանաց, որոց երեքն Հայ էին, այսինքն մեծաշուք տեսարք Մագաւուսեան Սեպուհ, Յովհաննէս Ալլահվէրտեան և Համազասպ Պալարեան Էֆէնտիք :

Հացկերոյթն յամարանոցն դեսպանին 'ի թաւապիտ եղև, ուր հրաւիրեալքն փոխադրեցան դեսպանատան յատուկ շոգենաւովն :

Ի կալիթա, 24 փետրվար 1877
Միւսմք Պատուելի մերազնէլց խոնարհ ծառայք, Յ. Մ. Վարդանեան Յ. Գ. Բաղդամեան Յ. Կարապետեան
Աւանդապահք կալի և Զիլր սուրբ եկեղեցեաց Հայոց :

Ըստ շրջաբերական ծանուցման պարոնայց Յ. Մ. Վարդանի, Յ. Գ. Բաղդամի և Երաւութիւն Կարապետեանի՝ Աւանդապահաց կալիթոյ և Զիլրոյ սուրբ եկեղեցեաց Հայոց, թուագրեալ 'ի 24 փետրվար 1877, դուամբեցաւ ընդհանրական ժողով հասարակութեան հայոց 'ի թիւ 16 Պօրտուգիս Զլրջ փողոցի տան, յաւուր երեքշաբթիով 'ի 27երորդում փետրվար ամսոյս յերկու տասաներորդում ժամու միջօրէին, յորում ժողովի ներկայ գտան

Երաւութի կարապետեան՝ Ս. Բ. Բաղդամ Յ. Մ. Վարդանեան Ա. Վարդան Յ. Գ. Բաղդամ Զաքարիա Վարդանէս Յ. Միքայէլ Յ. Խ. Յովհանն Ա. Գառապար Մ. Ա. Գառապար Հէնրի Մ. Պալ Յ. Ն. Ստեփաննոս Յ. Ա. Միքայէլ Մ. Կ. Շիրիսոս Ա. Մինաս Մելքում Եակոբ Գ. Գ. Պետրոս Մ. Խ. Յովակիմ Մելքում Յ. Մանուկ

—Արտաքին գործոց նախարար վսե. Սալֆէթ փաշան անցեալ ամսոյ 24ին փառաւոր հացկերոյթ մի տուաւ յամարանոցն իւր (որ 'ի Գան. լըճա Պոսֆորի վերայ) 'ի պատիւ Գերմանիոյ վսեմա. դեսպանին :

—Բողոքական Հայոց և այլ օսմանեան հպատակ բողոքականաց ազգապետ կամկրօնապետ Մատթէոսեան Յակոբ Էֆէնտիլին, նմանապէս Օսմանեան հպատակ Լատինաց ազգապետ Օթմէն Էֆէնտիլին միւթէմայիզի աստիճան շնորհեցաւ 'ի կայսերական կառավարութեան :

—Կայսերական հրամանագրով, հետեւեալ փոխութիւնքն և պաշտօնաբաշխութիւնքն տեղի ունեցան :

Հաճի Աճմէտ Վէսիմ փաշան, որ երբեմն ծովային գործոց պաշտօնեայ էր, Դանուբի ծովային զօրութեանց հրամանատար կարգեցաւ :

Ալի Քէմալ փաշան՝ Կարնոյ զինուորական խորհրդոյ նախագահ անուանեցաւ :

Մարաշի կառավարչի պաշտօնն Թէվֆիք պէյին յանձնեցաւ :

Տատեան Առաքել Սիսակ Էֆէնտիլին՝ Կ. Պօլոյ առեւտրական խորհրդոյն անդամ՝ կարգեցաւ :

ԱԶԳԱՅԻՆ

Վսեմաշուք Յովսէփ Զէլէպին Եոսուֆեան՝ ընկերութեամբ իւր ազնուափայլ ընտանեաց, յանցելում շաբաթու գաղղիական շոգենաւով 'ի Մարսիլիա գնաց, ուսկից 'ի Փարիզ և 'ի հանքային Նուրերն մտնելու պիտի երթայ :

—Ներկայ ամսոյս 26ին ամենապատիւ տէր Ներսէս Ս. Պատրիարք Հայրն մեր 'ի Բարձրագոյն Դուռն երթալով Մեծ—Եպարքոսին և Սալֆէթ փաշային հետ խօսակցեցաւ վասն ինչ ինչ ազգային խնդրոց :

Ի հետեւեալ աւուրն Նորին Սրբազանութիւնն 'ի Պէօյլեքտէէ գնաց յայցելութիւն Գերմանիոյ և իտալիոյ վսե. դեսպանաց :

—Ազգային Սահմանադրութեան 17երորդ տարեգարծին տօնախմբութիւնն՝ սովորական փառաւորութեամբ կատարեցաւ 'ի 27երորդումն ամսոյն անցելոյ կիրակի օրն 'ի սուրբ Փրկի ազգային հիւանդանոցն Կ. Պօլոյ . ուր ներկայ էին Ս. Պատրիարք Հայրն, Միսիթարեան Խորէն սրբազանն, Սիմէոն սրբազանն և այլ եկեղեցականք, նմանապէս 5000էն աւելի ժողովուրդ յերկուց սեւից :

Մ. տէր Ե. տէր Աւետ Պ. Զաքարիա Յ. Գ. Պետրոս Գ. Ղուկաս Թ. տէր Ստեփաննոս Աբրահամ Մ. Գալստան Պ. Բ. Բաղդամ Ա. Ա. Աղաբէգ Դանիէլ Բ. Բաղդամ Կ. Բ. Կարապետեան Գ. Խ. Թագէոս Գ. Մ. Գառապար Բ. Բեգլար Բ. Կ. Պետրոս Յովհաննէս Մ. Մարտիրոս Առաքել Զ. Առաքել Միկիլի Խ. Ղուկասեան :

Միւսմք հաւանութեամբ ժողովոյն Պարոն Մ. Խ. Յովակիմեան ընտրեցաւ աթոռակալ :

Նախ՝ առաջադրեցաւ 'ի պարոն Կ. Ն. Ստեփաննոս և երկրորդեցաւ 'ի պարոն Մելքում Յ. Մանուկ և համաձայն հաւանութեամբ ընդունելի եղև ժողովոյն, զի ըստորում յերկար ժամանակէ հետէ ժամանակ եկեղեցականութե պարոն թովմաս Մելքումեան և կուսիսարութեան պարոնայց Մ. Ս. Մալխասի, Մ. տէր Ե. Գալստանի, Խ. Թ. Աւետումի, և Ծ. Ս. Բիշմի լրացեալ է, վասնորոյ պարոն թովմաս Մելքումեանն արձակեցի 'ի պաշտօնէ եկեղեցականութեան իւրոյ, և վերոյիշեալ կուսիսարի պարոնայք ևս արձակեցին 'ի պաշտօնէ կուսիսարութեան սուրբ եկեղեցեաց կալիթոյ և Զիլրոյ, և յօրէ յայտնանէ չունիցին նոքա իշխանութիւն 'ի գործ գնելոյ զպաշտօն եկեղեցականութեան և կուսիսարութեան եկեղեցեացն :

Երկրորդ՝ առաջադրեցաւ պարոն Մելքում Յ. Մանուկեան, և երկրորդեաց պարոն Կ. Ն. Ստեփաննոս զի պարոն Մելքում Պետրոս Գառապարեան կարգեցի վասն երկոց ամաց՝ եկեղեցական կալիթոյ և Զիլրոյ սուրբ եկեղեցեաց Հայոց :

ԳԵՐՈՒՆ

Արդ սահեցան արագափողթ
Ընդ շնորհաբեր գալուստ գարնան
Մոռացութեան 'ի խոր անդունդ
Տխուր արկածք խիստ ջմերան :
Եկրն եհաս սիրոյն Մայիս
Պերճ թագ ուհին քաղցրեղանակ .
Ի նոյն եթէ , կոյսդ , նայիս ,
Ծաղկաղարդէ զքո հասակ :
Յեղանակիս Արեգ հրափայլ
Ընդ համասփիւռ երկնից կամար
Գայ սիգածեմ արագ 'ի քայլ
Սփռել զլոյս ակնապարար :
Ահ քանի՞ քաղցր և ներդաշնակ
Ի յօդ սիրի համայն թռչնոց
Այն հեշտալուր գեղգեղ նուագ
Վան զՄուսայից վեհ կնդնդոց :
Բազմաբուրնան զերթ դրախտ չքեղ
Բացեալ ահա պերճ տեսարան
Լերինք և դաշտք անտառք ահեղ
Առ մարդկութիւն հրաւեր կարդան :
Անդ արածին խոտածարակ
Անանեկաց հօտք բազմազան ,
Եւ դիեցիկք մայն համակ
Թինդս առեալ երամ երամ :
Արդ տեսանէք զգեղ Տրապիս ,
Քանի՞ դիւթիչ է ապաքէն ,
Գոգցես 'ի ձայն քաղցրահամայն
Առ մեզ խօսի նա փափկօրէն :
Եկ 'ի սիրահարդ , եղանակիս
«Այս զովասփիւռ դարնանային ,
Եկ 'ի դու յիմ գիրկ չքնաղ յիմ տիս
«Կապել պոսկ 'ի գլուխ քոյին :
«Ամեն ուրեք յիմ բուրաստան
«Ազատածեմ և դու չըլիս ,
«Վարդք և մեխակք բոյսք բազմազան
«Հեշտիւ գգուեն զհոտոտիւս» :
Եւ կաթնեղէնք 'ի բիւր պատկեր
Աստ անդ շարեալ 'ի պարզ տնակ
Կայտուն մանկունք անդ առ բնթեր
Ծաւալելով գիրդ մանուշակ ,
Ոչ տեսանի 'ի գեղջ սեղան
Սպանդ անգուծ հեգ կենդանեաց ,
Ոչ խորովածք և համադամ ,
Այլ կաթնեղէնք և մաքուր հոյ :
Սուրբ պարզութիւն համատարած
Ամենուրեք թագաւորէ ,

Մայր զիւր որդիս յորէն Աստուած
Ըստ կարի իւր աշակերտէ :
Կարկանդակք անդ լեռուն 'ի վայր ,
Եւ ջուրց ահա խոխոչ համբուն
Ողջագութեալ զգալուստ գարնան ,
Գնայ խառնիլ յովկեան անհուն :
Պարք և սրինգք հովուաց համայն
Ընդ հովուահեաց պարերգութիւն ,
Ո՛հ միացեալ ընդ քաղցրածայն
Երգս թռչնոց և բազմադոյն ,
Անդ յօրինեն Աստուածանուէր
Քաղցրանուագ դաշնակութիւն ,
Աղդ մարդկային համայն տիեզեր
Գան վայելել զբերկրութիւն :
Համայն տարերք ահա ցնծան
Ի բարեբաւ եղանակին ,
Ընդ բերկրութիւն ազգի մարդկան
Հրեշտակք անդամ դոգ մանակցին :
Ո՛վ որպէս զի մեծ է ո՛վ Տէր ,
Գործ քո մատին սքանչելի ,
Երկիր համայն և տիեզեր
Քո պարգեւօք են լիուլի :
Ամենակալ քեզ Արարչիդ
Քոյդ արարածք են աշխուհ ,
Եւ դրուատիք քեզ ճշմարիտ
Բանաւորացս սիրտ և լեզու :

Մուշեղ Տ. Յ. Քեղիշեանց ,
Աշակերտ սուրբ Մես. վարժարանի :

ԹԱՏՐՈՆ ԲԱՐԵԿԱՍՄ ՄԱՆԿԱՆՑ

Այս հանդիսին խմբագրութիւնն ստանձնեալ լինե-
լով պարոնայր Ս. Դ. Ե. Եւսեպիանայր գրագետքն Կ.
Պօլսոյ , կրխոստանան ամեն կարելի զոհողութիւնքն
ընել 'ի նպատակ քարոյսկան կրթութեան ազգային
պատանեաց եւ պատանոհեաց , զորս զբոսցնելով
պիտի աշխատին նոցա միտքը մշակել եւ զարգացնել
գուարձալի առակօք , օգտակար համառօտ պատմու-
թեամբք , գիտութեանց վերաբերեալ նախնական ծա-
նօթութեամբք եւայլն եւայլն ,
Թատրոն հանդիսն՝ որ պատկերազարդ է , ամիսն
երկու անգամ պիտի հրատարակուի մարտի տալա-
գրութեամբ : Տարեկան 24 բերթից գինն է վասն Պօլսոյ
մէկ արծաթ մեծիտ . իսկ գաւառաց համար 1 1/4 մե-
ծիտ՝ հանդերձ փոստայի ծախսիւն :
Բաժանորդագրութեան տեղն է 'ի Կ. Պօլսոյ Եւսե-
պիանայր Զիլիկիլիբի ճատտեօսի բիւ 2 , 'ի գրատունն
Ս. Դ. Ե. Եւսեպիանայր պարոնաց :

Երհաւաստեն թէ՛ այս հանդիսին առթիւ
17,000 շուրուշի հատոյթ գոյացեր է 'ի նպատակ
կենալ ազգային հիւանդանոցին :
—Մեծաշուք Մկրտիչ Աղաթօն էֆէնտին՝ որ
յատուկ պաշտօնիւ միով 'ի վան գտանէր , նոյն
գաւառին կուսակալութեան օգնական (մուա-
վին) կարգեցաւ փոխանակ Աղաթէկեան Մար-
կոս էֆէնտինի :
—Հասարակաց շինութեանց նախարարութեան
խորհրդական վսեմա. Գրիգոր Օտեան էֆէնտին
հանքային ջուրերն անհետ համար յեւրոպա-
կերթալով , նորա պաշտօնն՝ բարձրագոյն հրամա-
նաւոր առ ժամանակեայ կերպիւ յանձնեցաւ վսե-
մաւիչ Բօհաննէս էֆէնտինի , որ առեւտրական
գործոց վերատեսուչ է :
—Կ. Պօլսոյ ազգային լրագիրք կըմանուցա-
նեն թէ Գաղատիոյ Առաջնորդ Արիստակէս եւ
պիսկոպոսն , որ իւր անարժան վարուք և բա-
րութիւն դատաւարութեան արժանի ընթացքի
մէջ կը գտնուէր 'ի ձեռք ժամանակէ հետէ ,
իւր մայրենի եկեղեցին ուրանալով բողոքական
ընդունելու է , որպէսզի չերթայ 'ի Պօլսոյ ,
որ 'ի կողմանէ ազգային Պատրիարքարանի կող-
մած էր Բարձրագոյն Գրան միջոցաւ :
—Յօժարամիտ կըհրատարակեմք զհետեւեալ
պատասխանալիս արժանայարգ Միաբանու-
թեան Արմաշու վանոց՝ ուղղեալ առ յարգոյ
պատենապետն տնօրէն խորհրդոյ Հայ Ընթերցա-
նան քաղաքիս :
Կրփախաքէնք սակայն որ այս պատասխա-
նալիսն՝ ըստորում գրեալ յուսումնական Միա-
բանութեան միւս , պարզ գրաբաւ լինել և օ-
տարագրի բաւեր չպարունակէր :
Մեծապատիւ էֆէնտին , 'ի Զմիւռին :
Բարեհամբաւ քաղաքիդ մէջ հաստատեալ Հայ
Եկեղեցատան կողմանէ առաջարկութիւն բե-
րող նամակիդ , զոր ուղղած էիք Ս. վանուցս
քրաւ. Վանահօր՝ Տպարանի վերատեսուչութեան
անձնելով , ըստ յօժար հրամանի Նորին գերա-
պաշտութեան , Եսախայէկեան Սարգիս էֆէն-
տին բարեկամին միջոցով զրկած եմ մեր
պարանի արդիւնքն եղող գրքերը , փափաքե-
լով որ մեր ազգին մէջ ուսումն և ընթերցանու-
թիւն տարածուի , և այս խնդիրն ձեռք առնող
ազգայինք յԱստուծոյ օրհնութիւն և քաջալերին ,
ձեր մեծա. Թարգմութեան
Արմաշ , 7 Մայիս 1877 աղօթարար
Ներսէս վ. տ. Բարթողիմէոսեան,
միաբան Արմաշու վանոց :

Այնու բարեկարգութեամբ զի յիշեալ եկեղեց-
պանն ստացէ 'ի պարոն Թովմաս Մելքոնէն
զամենայն հաշուեգրեանս և զվերաբերելիս ե-
կեղեցւոյն , և ժողովեացէ զվարձս տանցն և զա-
մենայն եկամուտս եկեղեցւոյն , և վարեացէ լիա-
կատար կարողութեամբ զպաշտօն և զգործառ-
նութիւնս եկեղեցւոյն իւրոյ խորհրդով
և հաւանութեամբ մեծի մասին պատուելի Ս.
Հանդապահաց և կուսիսարի պարոնայց՝ գրու-
թեամբ աստանաւով զհաւանութիւն սոցա : Եւ
թէ դէպ լիցի զի նորոգ ընտրեալ եկեղեցւոյն
իւր իցէ ժամանակի , պարտաւորեցի վասն
անձնական գործոց թողուլ զքաղաքս վասն մի-
ջոցի ինչ երեք ամսոց կամ յաւել ժամանակի ,
պիսիքամ յանձնեցէ առ ժամանակեայ՝ զեկե-
ղեցւոյն իւր առաջին Աւանդապահին ,
այն է պարոն Յ. Մ. Վարդանիս , կամ յանձնե-
րութեան նորա , պարոն Յ. Գ. Բաղդամիս , և
կամ յանձներկայութեան երկուց առաջնոց՝
պարոն Յ. Կարապետ երրորդ Աւանդապահին և
պարոն մին կամ միւս ներկայ գտեալն՝ գործակ-
ցութեամբ ընդ պարոնայց կուսիսարաց վարես-
ցէ զպաշտօն եկեղեցւոյն իւր մինչ յառա-
ջ եկեղեցւոյն : Այս առաջարկութիւն ըն-
դունելի եղև ժողովոյն միաբան հաւանութիւն :
Երրորդ առաջարկեաց պարոն Յ. Յ. Ղուկասն
և երկրորդեաց պարոն Մելքոնէն Մանուկեան
զի պարոնայք Ս. Խ. Յովակիմ , Յովհաննէս Մի-
քայէլ , Զաքարիա Վարդանէս և Կ. Յ. Կարա-
պետեան կարգեցին կուսիսարի կալիթու և
Չիլայ սուրբ եկեղեցեաց Հայոց վան երեք ա-
մսոց միջոցի , 'ի տեղի պարոնայք Ս. Ս. Մովսիսի
Ս. տէր Յ. Գալուստի , Խ. Թ. Աւետուի , և Ծ.

Ս. Բիշմանի , և միաբան հաւանութեամբ ընդու-
նելի եղև ժողովոյն առաջարկութիւնս :
Չորրորդ՝ առաջարկեաց պարոն Խ. Յ. Ղու-
կաս , և երկրորդեաց պարոն Մելքոնէն Յ. Մա-
նուկ , և միաբան հաւանութեամբ ընդունելի
եղև ժողովոյն , զի նոր կարգեալ եկեղեցւոյն
պարոն Մելքոնէն Գաւապարեան , և պատուելի
Աւանդապահք և պարոնայք կուսիսարիք եկե-
ղեցեայն պահանջեցին և ստացին 'ի պարոն
Թովմաս Մելքոնէն և 'ի միւս պաշտօնակցաց
նորին զհաշուեգրեանս՝ զանօթեղէնս և զայլ ա-
մենայն ինչ որք վերաբերին կալիթոյ Զիլոյ
և Սէյդաբաղայ եկեղեցեաց , և նաև՝ պահան-
ջեցին 'ի նոյնանէ զուրոր հաշիւ ելեմտից եկե-
ղեցւոյն՝ ընթացս ժամանակի պաշտօնատարու-
թեան նոցա , և զամենայն պատրաստի դրամ
որք իցին առ նոսա : Եւ եթէ յիշեալ պարոն
Թովմաս Մելքոնէն և պարոնայք կուսիսարի
պաշտօնակիցք նորին չհաճեցին յանձնել նոցա
զայնս , և կամ դժուարութիւն ինչ արկցեն 'ի
կատարումն պաշտօնատարութեան նորին , յայն-
ժամ յիշեալ Աւանդապահքն , կուսիսարիք և
նորոգ կարգեալ եկեղեցւոյն պարոն Մելքոնէն
Գ. Գաւապարն՝ ունիցին լիակատար կարողութիւն
յառաջանալ յատեանս քաղաքիս ընդդէմ յիշ-
եալ պարոն Թովմաս Մելքոնէն և պարոնայց
կուսիսարեաց՝ որպէս և բարի համարիցին և զու-
րոյ ծախսն հատուցեն 'ի ստացուածոց և 'ի
անդկէ սուրբ եկեղեցւոյն :
Հինգերորդ առաջարկեաց 'ի պարոն Յ. Կա-
րապետեանէ և երկրորդեաց 'ի պարոն Խ. Յ.
Ղուկասէն և ընդունելի եղև ժողովոյն՝ հաւա-
նութեամբ ընդունելի , զի յայնմէն տե՛ս ամենայն

դաշնադիրք տանց և կալուածոց եկեղեցւոյն
գրեցին և ստացին յանուն պատուելի Աւան-
դապահաց և եկեղեցւոյն 'ի նոյն դաշնադիր-
քն մնացեն առ Աւանդապահս , և նոքա՝
այսինքն Աւանդապահքն գրեցին առ բնակիչս
կամ քրէադարս տանց և կալուածոց՝ հատուցա-
նել զվարձս այնոցիկ՝ պարոն եկեղեցւոյն յոր-
չափ ժամանակ զստացեալ իշխանութիւն յետս
կուտալ չեն :
Վեցերորդ՝ առաջարկեաց 'ի Պ. Մելքոնէն Յ.
Մանուկէ , և երկրորդեաց 'ի պարոն Յ. Միքա-
յելէ և միաբան հաւանութեամբ ընդունելի
եղև ժողովոյն , զի պատուելի Աւանդապահքն և
նոր կարգեալ եկեղեցւոյն և կուսիսարիքն յետ
պահանջելոյ 'ի պարոն Թովմաս Մելքոնէն՝ առ
'ի յանձնել ինքեանց զուրոր դաշնադիրս տանց
և կալուածոց սուրբ եկեղեցւոյն և զայլ ամե-
նայն թղթեան վերաբերեալ ելեմտից կամ
պարտաւորանից եկեղեցւոյն , եթէ ասացեալ
պարոն Թովմաս Մելքոնէն չհաճեցի տալ զայնս ,
յայնժամ Աւանդապահքն և եկեղեցւոյն և
կուսիսարիք պարոն ծանօթս տալ բոլոր քրէ-
ադարաց և արդեւուլ զնոսա զի հատուցեն
յայնմէն զվարձս տանց պարոն Թ. Մելքոնէն
և ինքեանք պահանջեցին օրինօք զվարձս տան-
ցն և կալուածոց և զամենայն պահանջս եկե-
ղեցւոյն : Ս. Խ. Յովակիմեան արքուալայ :
Առաջարկեաց պարոն Խ. Յ. Ղուկասն և երկ-
րորդեաց պարոն Յ. Միքայէլ , և ժողովն միաբան
հաւանութեամբ մատոյց զշնորհակալութիւն
իւր պարոն Աթոռակալին վասն բարեւոք կառա-
վարելոյ զաթոռն :

ԱՐԻՒՆԱԼԻ ՄԱՐԻՅԱՆՈՒՆ

Տաշ կոմսուհուհայն այս պատուական գործոյն թարգմանութեան երկրորդ և վերջին հատորն է, արարեալ 'ի յարգոյ խորով Ե. Պուռնուսուհեանէ : Ի լոյս ընծայեցաւ 'ի տպարանի Տէտէեան եղբարց 'ի Զմիւռնա : Գին՝ 2 ֆրանք :

ԽՈՐՀՐԴԱՒՈՐ ԿՂԶԻ ՕԴԱՊԱՐ ՆԱԽԱԲԵԿԻ

Ժիւլ Վէրն գաղղիացի հեղինակին հետարրորակոն գեղեցիկ մէկ աշխատութիւնն է, զոր յարգոյ Մ. Մամուրեան զրազտն թարգմանեաց 'ի հայերէն աշխարհի բարբառ : Յիշեալ գործոյն առաջին հատորն է թարգմանութիւնն՝ որ բաղկացեալ է յութածալ 244 էրեսաց և 'ի լոյս ընծայեալ 'ի տպարանի Տէտէեան եղբարց 'ի Զմիւռնա, 1877 :

Կըվաճառի 'ի գին 2 ֆրանք :

ՁԱՆԱՁԱՆ ԵՌԻՐԵՐ

Զմիւռնիա, 11 Յունիս :

Պաշտօնական լուրերն կըմանուցանեն թէ Ռուսք երկոյս յարձակեցան Կարսի թահմաս ամբողջին վերայ, և երկոյս ետ քշուեցան վրասուք : Դարձեալ Ռուսք յաղթուեցան Չէրքէզտանի մէջ՝ 300 հոգի թողով 'ի գաշան պատերազմին : Իսկ Կարսոյ կողմը թշնամեայն բանակը ետ քաշուեցաւ չարժման մէջ կըգտնուի :

Թէեւ մեր վիճակին ամեն կողմերէն անպակաս կամաւոր զինուորք և այլ միւսվաճիւղ զօրք կուգան 'ի քաղաք, բայց գոհութիւն Աստուծոյ, յի հասարակաց բարեկարգութիւնը հաստատուն կըմնայ միշտ մեր վսե. կուսակալին խոհական և լուրջ կառավարութեամբ՝ որ անշուշտ երախտագրութեան արժանի է :

Կըհաւատեն թէ մարդ գլուխ նոր հարկ մի պիտի դրուի՝ պատերազմին անհրաժեշտ ծախքը հոգալու համար :

Հինգշաբթի օրն՝ Մեծին—Բրիտանիոյ թագուհուհոյն գահակալութեան տարեդարձն սովորական հանդիսիւ տօնախմբեցաւ : Այս առթիւ մեր նաւահանգիստը դառնող պատերազմական բոլոր նաւերն զանազան դրօշակօք զարդարեալ էին, իրենց մեծ կայմին վերայ պարզած ունեւաւով զանգրիական դրօշն :

Ձինու սպառնալիք յափշտակութիւնքն և գողութիւնքն, որք ժամանակէ մը 'ի վեր գաւառած էին, դժբաղդաբար վերստին սկսան, և գրեթէ ամեն օր այսպիսի չարագործութիւնք անպակաս են : Տարակոյս չունիմք թէ մեր ոստիկանութեան անսուշ վսե. Եսային—Պէյն իւր սովորական բարեջան հսկողութեամբն, պիտի յաջողի հասարակաց ապահովութիւնն վերահաստատել, ինչպէս յաջողեցաւ յառաջին անգամն :

Ի Կ. Պոլսոյ կըգրեն թէ Սիւլէյման փաշա և Ալի Սափ փաշա զօրապետք յաջողեցան միանալու : Հետեւաբար Գառաւազին թուրքիոյ ձեռաց ներքե և կըհամարուի :

Փարիզէն կըմանուցանեն թէ Գառաւազը մտադիր է Ռուսիոյ օգնութիւնը խնդրել :

Ըստ թուրքերէն ՎԱՖԲԹ լրագրոյն, Բարձրագոյն Գուռն յաջողութեւ երկու միջոցն իրաւից փոխառութիւն մի ընելու Եւրոպիոյ մէջ :

Գաղղիոյ ազգային երեսփոխանական ժողովն լուծուեցաւ Մաք—Մահման մարաշախտին մէկ պատգամագրովը, և նոր երեսփոխանաց ընտրութիւնն անյապաղ 'ի գործ պիտի դրուի : Այս եղելութիւնն, որում 'ի բազում աւուրց հետէ կըսպասէր հասարակութիւնն, մեծ տպաւորութիւն չըրաւ նորա վերայ :

Հեռագիրն կըմանուցանէ թէ Ռուսիան մերժեալ է զգործակցութիւնն Սերվիոյ 'ի ներկայ պատերազմին : Գործակցութիւն՝ զոր Միլան իշխանն 'ի Պուրէշ երթալով մատուցեր է, կըսեն, Աղէքսանդր կայսեր :

Պուրէշէն ամսոյս 9—21էն յուղարկեալ հեռագիր մի կըսէ թէ մեծամեծ պատրաստութիւնք կըլինին 'ի զօրաբանակն Ռուսաց և թէ Ալուիս գետոյն եղերքը՝ որոյ չուրերն 'ի Դանուր կըթափին, բաղմամբիւ զինուորական զօրութիւնք կըժողովուին հանգերձ մեծաքանակ զանազան նիւթերով :

Ռուսաց կառավարութիւնն կըխոստանայ 80,000 ֆրանք վարձք վճարել սրէէ անձի, որ պիտի համարձակի ծովառումեր (թորթիլ) ձգել օսմանեան նաւուց քով : Եթէ այս յանդուգն առաջարկութեան իրադործելու ժամանակը սպաննուի, խոստացեալ վարձքը՝ նորա ընտանեաց պիտի հատուցուի :

Արագերէն լրագիրն էլ ԱՖՊԱՐ անուն, որ 'ի ձեզայիւր կըհրատարակուի, կըսէ թէ կրօնական հրաւեր մի կըլինի ամեն մահմէտական ցեղերուն ձեզայիւրի, թունուզի և Ֆէսի, առ 'ի յորդորել զնոսա երթալ 'ի պատերազմընդդէմ թշնամեայն խալիֆէութեան :

Մօսկու ժողէֆ Պոսուի, որ օսմանեան կայսերութեան փարոսներուն (ֆէնէր) ընդհանուր անօրէն է, Օսմանիէ կարգին չքանչանաւ պատուեցաւ 'ի փոխարէն իւր բաղմամբայ հաստատուն ծառայութեանց : Մօսկու Գալլաս՝ որ նոյն փարոսներուն հոգարարն է, մի և նոյն չքանչանն ընկալաւ :

Մուսկու—Վալաքիայի իշխանն՝ յատուկ յիշատակագրով մի զօր յուղարկած է առ անուրթութիւն Եւրոպիոյ, կըգանգատի, որ դժբաղդաբար, տակաւին Հնամեցան իրենց հաւանութիւնը չնորհել Մուսկու—Վալաքիայի անկախութեանը :

Ահաւասիկ համառօտութիւնն, կըսէ քաղաքիւ Էնթրասիսի օրագիրն, յորդուածոյ միոյ, զոր՝ Հայոց Արիստակէս արքեպիսկոպոսին հանդերձ 300 հոգուսք 'ի թեմականաց իւրոց՝ բողոքական կրօնն ընդունելու առթիւ կըհրատարակէ Գաղաթիոյ լրագիրն :

Գաղաթիոյ մէջ հռչակաւոր մեծ շինուած մի կայ, որ է Ազոստոս կայսեր տաճարն : Արդայս կայսեր օրովն է որ Հռոմի մէջ Բանթէոն տաճարն կանգնեցաւ, ուր եկին և բաղմեցան բոլոր ազգաց Աստուածքն : Կերեի թէ կապրիմք ընդ զաղեցութեամբ այն վեհապետին որ կանգնեաց զյիշեալ մեծ շինուածն մեր քանզի Գաղաթիան Բանթէոն մի գառնալու վերայ է : Արդէն ունէինք աստ Սիւնի միւսիւրմաններն, Շիլի միւսիւրմաններն, կաթոլիկ լատիններն, Հրէաներն, Հասոնեան Հայ կաթոլիկներն, Հակահասոնեան Հայ կաթոլիկներն, Լուսաւորչական (Գրիգորեան) Հայերն՝ Պատրիարքին հնազանդողք, և Լուսաւորչական Հայերն՝ Պատրիարքին չհնազանդողք : Եւ այժմ այս վերջինքն բողոքական եղեն :

Թէեւ Հայոց ազգին վերաբերեալ վերջին տղերն խիստ տխուր են, այսու ամենայնիւ մեք կարծեմք թէ Արիստակէս եպիսկոպոսին հետ բողոքական եղող Հայոց թիւն՝ որ 300 կըգրէ չափազանցութեամբ նշանակեալ է, և գուցէ զէրօ մի աւելի գրուած է :

Ի նամակէ միոյ գրելոյ յիշխարտութեան համարմբ քաղել զհետեւեալ տողն, որք անշուշտ ուշագրութեան արժանի են :

«Յորմէ հեաէ Ռուսաստանեան պատերազմն հրատարակեցաւ, պատերազմական բաղմամբիւ նաւուց 'ի նաւահանգիստն Աղէքսանդրիոյ երթեալութիւնն՝ զարմանալի կերպիւ աւելցաւ : Բաց յայտմանէ Անդղիոյ զօրաբանակին ոչ սակաւ պաշտօնատարք և հնգիկ սպայք՝ որք յեղիպտոս գտանին, ամեն օր կըքնեն, զին կըհաստանեն, կըչափեն և արժէքն կիմանան ամեն մէկ կտոր գետնի՝ ճիշտ այնպիսի ուշագիր կերպիւ, զոր գնոյ առնելոյ մտադիր անձինք կըքնեն կալուած ու անշարժ ստացուածք մի, զոր պիտի գնեն : Հարկ չէ յաւելուլ թէ իրաց այս վիճակը զանազան մեկնութեանց պատճառ կուտայ քաղաքագէտ անձանց :

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ

Բամպակը 'ի հանգարտութեան գտանի 'ի պատճառս ոչ քաջալերական լոյց եւրոպիոյ, ուստի և գիներն իջանելոյ վերայ են :

Աֆիօնին նոր հունձէն 30 կողով վաճառեցաւ 130 զուրուշով առ 15 քին : որ 135 կամ 136 զուրուշ քսել է, վանզի շատ թաշ է և նախքան զերուսաւորն հարկ է չորցնել : որով աս նուազն 5 առ 0/0 կըպակսի :

Փայամուտը գիւրաւաճառ է միշտ, և 1800 կենդինար Անդղիոյ տեսակ՝ հին ապրանք վաճառեցաւ 145 զուրուշով առ կենդինարն :

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Այսին վիճակին ընդհանուր հատկութիւնն անշուշտ իմաց կուտայ հասարակութեան թէ չպարզին անհիմն է տասանորդի վարձակալաց (միւլթէգիմ) մէջ տարածեալ այն հաւաքան՝ իր թէ ներկայ տարւոյս տասանորդքն պիտի չվաճառին : Ընդհակառակն արդէն պաշտօնագէտ հրատարակեցան լրագրաց մէջ որոշեալ աւուրքն՝ յորս հրապարակական աճուրդքն տեղի պիտի ունենան : Տեղական իշխանութիւնքն՝ եթէ չահաւոր գին մի գտնեն, պիտի վաճառեն զտասանորդքն վիճակին, առանց հարկ լինելու Բ. Դրան վաւերացմանը : Գայմէն պիտի ընդունուի 'ի գին 100 զուրուշից :

Բունթայի թաղը եղած ծովու բաղանքն ներկայ Յունիս ամսոյն 1էն հասարակութեան տրամադրութեանց ներքե է : Զուրը մտնելու զող պարոնայք և տիկնայք հարկաւոր եղած ամեն բաներն պատրաստ պիտի գտնեն այս հաստատութեան մէջ : ուր սփածանելիք (փէշտիմալ, քօսթիւմ) ևս կըգտնուին վասն արանց և վասն տիկնայց թէ վարձքով և թէ գնոյ առնելու համար : Դայրտանց աշակերտաց խումբերն և 'ի բաղմամբիւ անգամայն բաղկացեալ ընտանիքն աճան գնովք կընդունուին :

Թրամվուէի կառաց երթեկուրեան գիւրն : Ի շտեմարանաց մաքսատան մինչև 'ի կայարանն երկաթուղոյն Այսինի 1. 2 Ի նոյն շտեմարանաց 'ի բաղանիս Բուն. 1 1/2 » 'ի Պէլլա—Վիսթա 1 Ի սրճարանէն Լուքայի 'ի բաղանիս 1 Ի հիւպոտոսարանէն Գաղղիոյ. » 3/4 Ի սրճարանէն Լուքայի 'ի կայարանն 1 1/2 Երկալ կառքն քիչ մը պիտի քենան 'ի սրճարան, Լուքայի, 'ի նաւամատոյն հիւպոտոսարանն Գաղղիոյ և 'ի Պէլլա—Վիսթա՝ ճանապարհորդներ առնելու և դուրս հանելու համար :

Թրամվուէի կառաց երթեկուրեան ժամըն պիտի համապատասխանեն Այսինի երկաթուղոյն երթեկութեան ժամուց : Վերադարձին գինքն՝ նոյնն են ընդ գնոց երթալուն :

Թրամվուէի կառաց երթեկուրեան ժամըն : Ի շտեմարանաց մաքսատան կըմտնին առուստեան ժամը 5, 6, 7, 8, 9, 10, 12 1/2ին ըստ Յրանկաց : և կեսօրէն ետե ժամը 2 30, 3 30, 4 30, 5 30, 6 30, և 7 30ին : Կըվերագառնան առուստեան ժամը 5 30, 6 30, 7 30, 8 30, 9 30, 10 30, և 11 30ին : և կէսօրէն ետե 1, 3, 4, 5, 6, 7 և 8ին, ըստ Յրանկայ :

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Այս լրագիրը երկու շաբաթը անգամ մը՝ շաբաթ օրը կըհրատարակուի : Տարեկան գինը 120 զուրուշ է ող զրամով, կանխիկ վճարելի : Գուրս երթալու լրագրաց ճանապարհի ծախքը՝ առնօղին վերայ է : Ո՛վ որ կուզէ, կրնայ բաժանորդ գրուիլ Զմիւռնիա՝ Արշալոյսոյ զրաւունքով : Իսկ ուրիշ քաղաքաց համար, ահա կըքնանակմբ լրագրոյս մեծարգոյ գործակալաց անուանքը, որք են :

Կոստանդնուպոլիս՝ Հ. Ս. Ալաճաճեան Էֆէնդի : Տիօրէն և Տէր Փառնջ լրագրոյն :

Աղէքսանդրիա՝ աղա Մկրտիչ Հաղպեան : Գահիրէ՝ Իսկինդար աղա Մեղիքեան : Յոպսէ՝ աղա Սիմօն Ս. Մուրատեան, փոխ—Հիւպոտոս Գերմանիոյ :

Բէզեսպուրիկ՝ խաշատոր սարկաւաղ Խանթարճեան Մոսկուա՝ պարոն Զարմայր Մսերեան : Հալպա՝ Տ. Իսահակ քահանայ Դանգիլիեան : Պաղատա՝ Անդղիոյ հիւպոտոսի փոխանորդ, աղա Մեքայիլ մահմետի Միմասեան : Կալկաթա՝ պարոն Մ. Խ. Յովսիփեան : Մատրաս՝ պարոն Անդրէաս Մամ : Պաղատիա՝ պարոն Մանուկ Որդանեան :

Խոփաղի—աղա լրագրոյս, Գ. Լ. Գ. Պալաշաբեան :

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐՇԱՆՈՒՅՍՈՅ ԱՐԱՐՈՏԵԱՆԻ